

Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Ր

ՍՏԵԼԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՅՈՒ «ՏԵՍՈՒԹԻՒՆ Ի ՄԱՐԴՈՅՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ» ԵՐԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հունաբան դպրոցի ուշ շրջանի թարգմանությունների շարքում աչքի է ընկնում Դ դարի նշանավոր աստվածաբան ու փիլիսոփա Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» («Յաղագս կազմութեան մարդոյ») երկը: Այն իր մեջ ներառել է մարդաբանության կարեւոր հարցերի վերլուծություն՝ սկսած աստվածաբանությունից մինչեւ բնափիլիսոփայություն եւ բժշկություն: Իր գրքի առաջաբանում, որը Բարսեղ Կեսարացու մահվան տարում՝ 379 թ., որպես նվեր Զատիկի տոնի առթիվ, ձոնել էր կրտսեր եղբորը՝ Պետրոս Սեբաստացուն, նա բացահայտում է գործի բուն նպատակը, այն է՝ իրականացնել «Վեցաւրեայ»-ում անկատար մնացած ավագ եղբոր մտադրությունը՝ անդրադառնալ մարդաբանության հարցերին (3, էջ 321): «Ոչ իբրու աւտարացուցանել եւ աղարտել խառնելով մերոյս գնորա ջանն կամեցեալ,- գրում է Նյուսացին: - Քանզի ոչ է արժան զբարձրն զայն թշնամանել բերան մերովքս հիւժեալ բանիւք, այլ զի մի թուեսցի անկատար եւ պակաս վարդապետին փառք յաշակերտսն իւր լինել: Քանզի եթէ թերւոյն ի Վեցաւրէին ի մարդն տեսլեան ոչ մի ոք յաշակերտելոցն փոյթ ինչ առ թերւոյն լրումն մատոյց առեալ, լինէր յիրաւի զմեծէ փառաց նորա եպերանաց կռիւ, իբրու թէ ոչ կամեցեալ գիտութիւն ինչ հասական տեսանող ի լսաւղսն գործել» (ՄՄ, ձեռ. 468, էջ 1բ-2ա):

Նյուսացու գիրքը լայն ճանաչում է գտել հայ մատենագրության մեջ: Միայն Մաշտոցի անվան Մատենադարանում այն պահպանվել է 31 գրչագրերում՝ ձեռ. 51, 417, 418, 419, 421, 463, 464, 466, 467, 468, 469, 470, 552, 620, 844, 1500, 1649, 1828, 2103, 2498, 2508, 2509, 2708, 3184, 3463, 3979, 5253, 6622, 6848, 7135, 9427 (5; 6; 7; 8; 10; 15, էջ 57-59; 17, էջ 199-207; 30, Ը. 73-80 եւ այլն): Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանն ունի «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկի 6 գրչագիր (ձեռ. 56, 294, 1128, 1129, 1241, 2119) (9), իսկ Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց վանքի մատենադարանը՝ 5-ը (ձեռ. 390, 757, 820, 1122, 1810) (14):

Միջնադարում Նյուսացու գիրքը թարգմանվել է նաեւ լատիներեն (Դիոնիսիուս Փոքր VI դ., էրիուգենա IX դ.) ասորերեն ու վրացերեն, իսկ նորագույն շրջանում՝ ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, իտալերեն, իսպաներեն, լեհերեն, ռուսերեն եւ հրատարակվել՝ սկսած 1512 թ. մինչեւ մեր օրերը (18; 19; 22; 23):

24,124D-256C; 27; 29, c.145-146; 31, c.152-158):

Առաջին անգամ եվրոպական գրականության մեջ նյուսացու երկի հայերեն թարգմանության անդրադարձել է 1832 թ. նոյմանը *“Versuch einer Geschichte der armenischen Literatur”* գրքում (23): Հետագայում Ջորջ Ֆորբսը՝ հիմնվելով մխիթարյաններից ստացած տեղեկությունների վրա, այն բնութագրել է որպես բառացի թարգմանություն (27): Նույնիսկ մեր օրերում Ֆիլիպ Լեւինն իր *“Two Early Latin Versions of St. Gregory of Nysse’s περί κατασκευής ἀνθρώπου”* (22) արժեքավոր ուսումնասիրության մեջ համարյա ոչինչ շուներ ավելացնելու այս կարծիքին:

Պատճառը պարզ է հայերեն բնագիրը մինչ այսօր ձեռագիր վիճակում է: Այժմ հրատարակության ենթահանձնում «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքի քննական բնագիրը, որի համար հիմք է ծառայել հունարեն բնագրին ամենամոտ կանգնած Մաշտոցի անվան Մատենադարանի ԺԲ-ԺԳ դարերի հմր. 468 լիարժեք ձեռագիր մատյանը եւ ԺԳ-ԺԷ դդ. ինը գրչագրեր՝ ձեռ. 51, 469, 470, 620, 1500, 1649, 2508, 3463, 5253:

Հայերեն թարգմանության ժամանակի եւ թարգմանիչների հարցը հայագիտության մեջ առաջացրել է տարակարծություններ: Հայերեն գրչագրերի հիշատակարաններում միաժամանակ հանդես են գալիս գրության երկու տարբեր տարեթիվ՝ մեկը ըստ աշխարհի արարչագործության (6227 կամ ավելի ճիշտ՝ 6225 թ), որը համապատասխանում է փրկչականի 717 թվականին, իսկ մյուսը՝ ըստ հայոց թվականության (ՄԻԱ), այսինքն՝ 772 թ.: Հիշատակարանում ասված է. «Ի Յ-երորդի Մ-երորդի Ի-երորդի Է-երորդի (6227) արարածոց աշխարհիս, ըստ յունարէն թուոյ՝ ի չորեքտասաներորդի ընդիքտիոնին, իսկ ըստ հայում թվի ՄԻԱ (772), յառաջին ամի թագաւորութեան Լեւոնի, թարգմանեցան գիրք սրբոյն Գրիգորի, Նիւսեա եպիսկոպոսի, ի ստոյգ արինակաց, ի Կո[ս]տան[դն]ուպալիս, ի ձեռն Դաւթի Հիւպատոսի, ի թագաւորական սեղանոյն յանգիւնառի [Կենառի], ի ձեռն Ստեփանոսի քահանայի եւ քերդողի, աշակերտի տեառն Մովսէսի Սիւնեաց եպիսկոպոսի» (ՄՄ ձեռ. 470, էջ 115ա-բ):

Հետագայում պարզվեց, որ հայոց ՄԻԱ (772) թվականը չի համապատասխանում ոչ Բյուզանդիայի Լեւոն Գ կայսեր թագավորության ժամանակաշրջանին (717-741 թթ.), եւ ոչ էլ Ստեփանոս Այունեցու ապրած տարիներին (680-735 թթ.), ուստի հայագետներից Մ. Չամչյանը (12) եւ Հ. Տաշյանը այն համարեցին գրիչների սխալ: Վերջինս գրում է. «Դար մը յառաջ Հ. Միքայէլ Վ. Չամչեան իւր Պատմութեան մէջ բերած է յիշատակարանս ուրիշ ձեռագրի մը համեմատ, ուր թուերը քիչ մ'այլազգ են: Աշխարհիս թուական կը դնէ 6225, իսկ «Կենառ» բառի տեղ կը կարդանք ուրիշ աղաւաղութիւն մը «յակիւնառի»: Ասոնք ի բաց թողլով կը յիշեցընենք, որ Չամչեանի օրինակը «ըստ հայում թուականին ճկե» կկարդայ, որ է 716, ուրեմն՝ կրնանք ըսել՝ ճիշդ: Չամչեան կը յաւելու թէ «ի միում ձեռագրի» միայն «ՄԻԱ. թուական գրուած է, զոր «յայտնի սխալ գրչաց» կանուանէ» (16, էջ 9-10):

Համաձայն Գ. Հովսեփյանի կարծիքի՝ «այս ձեռագրի «իսկ ըստ հայում ՄԻԱ» յետին յավելումն է, Լեւոն Գ-ի եւ Լեւոն Դ-ի (775-780) թուականների շփոթմամբ» (4, էջ 55): Անդրադառնալով այս հարցին՝ «Գրիգոր նյուսացին հայ մատենագրության մեջ» գրքում Կ. Մուրադյանը նկատում է. «որ հետազոտողի «յետին յավելումն է» վերապահմամբ միանգամայն տեղին է, հաստատվում է վերում վկայակոչված Մաշտոցի անվան Մատենադարանի հմր 469 գրչագրի օրինակով, ուր «իսկ ըստ հայում ՄԻԱ»-ն Ստեփանոս գրչի ձեռքով ավելացվել է լուսանցքում եւ միայն հետագա ընդօրինակություններում է մուծվել բնագիր եւ այդ եղանակով դարձել հիշատակարանի մաս» (10, էջ 68): Սակայն ըստ մեր հետազոտման տվյալների՝ Մաշտոցյան Մատենա-

դարանի գրչագրերի հիշատակարաններում առկա է միայն «ՄԻԱ» թվականը:

Վիճաբանություններ են ծավալվել նաեւ թարգմանչի կամ, ավելի ստույգ ասած, թարգմանիչների անձի շուրջ, քանի որ Ստեփանոս Սյունեցուց բացի եւ նույնիսկ նրանից առաջ վերոհիշյալ հիշատակարանում նշված է Դավիթ Հյուսպատոսի անունը, որը կրում է «թագաւորական սեղանոյն կենառի (*cenarius*), այսինքն՝ սեղանապետի պատվավոր տիտղոսը: (Ի դեպ նշենք, որ վերջինս ձեռագրերում հաճախ առկա է աղավաղված «յակիրնառի» կամ «յանգիրնառի» ձեւով եւ որոշ հեղինակների, այդ թվում Բրոսսեի կողմից (21, թթ. 82-83), սխալմամբ մեկնաբանվել է որպէս կելար (*celarius*), այսինքն՝ մառանապետ):

Այս պարագայում հայագետների կարծիքը բաժանվել է. նրանցից մի մասը, օրինակ՝ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» հեղինակները (11, էջ 16) եւ Գ. Զարբանալյանը (8, էջ 362-374) որպէս թարգմանիչ էին ընդունում միայն Է-Ը դարերի անվանի գիտնական Ստեփանոս Սյունեցուն, մինչդեռ շատերը (1, էջ 603-605; 2, էջ 36; 10; 25), ելնելով վերոհիշյալ հիշատակարանի եւ ԺԳ-ԺԴ դարերի նշանավոր հայ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի (13, էջ 135) «Պատմութիւն նահանգին Սիսական» գրքում բերած հայտնի վկայութիւնից («Եւ ծանօթացեալ մեծ հրւպատոսի մի Դաւիթ անուն եւ թագաւորական սեղանի կենառի. եւ ձեռնտուութեամբ նորին թարգմանէ զգեղեցիկ գիրսն սրբոյն Գիտնիսիոսի եւ դնէ ինքն դժուարագոյն եւ խրթին բանիցն լուծումն բան առ բան. թարգմանէ եւ զգիրսն քաղցրաբան Գրիգորի Նիւսացույն զԲնութեան եւ զԿազմութեան»), համարում են Դավիթ Հյուսպատոսին Սյունեցու համագործակից: Հետաքրքրական է նշել, որ Գիտնիսիոս Արեոպագոսուն վերագրվող երկերի հայերէն թարգմանութեան մեջ առկա հիշատակարանը համարյա նույնութեամբ կրկնում է Նյուսացու երկերը, այն տարբերութեամբ միայն, որ իբրեւ թարգմանութեան ժամանակ նշված է հայազգի Փիլիպպոս կամ Փիլիպպիկոս Վարդան (711-713) Բյուզանդիայի կայսեր թագավորութեան երկրորդ տարին՝ 712 թվականը (6220-ը ըստ աշխարհի արարչագործութեան):

Ամփոփելով ձեռագրերում առկա հիշատակարանների տվյալները եւ Ստեփանոս Օրբելյանի վկայութիւնը՝ կարելի է եզրակացնել, որ հասնելով Պոլիս 712 թ., երբ դեռ թարմ էին հայերի հիշողութեան մեջ «կրակի տարին» ու նրա արհավիրքները, Ստեփանոս Սյունեցին մնում է այստեղ 6-7 տարի եւ թարգմանում Դավիթ Հյուսպատոսի օգնութեամբ՝ սկզբում Գիտնիսիոս Արեոպագոսու, ապա՝ Գրիգոր Նյուսացու եւ Նեմեսիոս Եմեսացու երկերը (ըստ որում վերջինիս աշխատութիւնը միջնադարյան մատենագրութեան մեջ նույնպէս վերագրվում էր Գրիգոր Նյուսացուն):

«Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքի հունարեն բնագիրը բաղկացած է առաջաբանից եւ 30 կամ 31 գլուխներից, որոնցից մոտավորապէս կեսը նվիրված է փիլիսոփայական, բնագիտական ու բժշկագիտական հարցերի (I, VII, VIII, IX, X, XI, XII, XIII, XIV, XV, XXIV, XXVIII, XXIX, XXX), իսկ մյուս կեսը զուտ աստվածաբանական բնույթի է (II, III, IV, V, VI, XVI, XVII, XVIII, XIX, XX, XXI, XXII, XXIII, XXV, XXVI, XXVII), թեպէտ հաճախ պատահում է, որ այս հարցերը քննվում են միեւնույն գլխում:

Սկզբնաղբյուրի քննական բնագիրը քսանից ավելի ձեռագրերի բաղադատութեամբ եւ Գիտնիսիոս Փոքրի լատիներէն թարգմանութեամբ լույս ընծայեց 1855-61 թթ. Զորջ Ֆորբսը (27): Վերջինս այն հրատարակեց փոքր տպաքանակով իր սեփական տպարանում, որի պատճառով այսօր դարձել է գրեթէ անմատչելի ուսումնասիրողների համար: Նրա հիման վրա 1893 թ. լույս տեսավ Նյուսացու գրքի անգլերէն թարգմանութիւնը՝ "On the Making of Man" (19): Համաձայն Ֆորբսի դասակարգման՝ գոյութիւն ունի 2 ձեռագրախումբ: Այս ձեռագրախմբերի միջեւ եղած տարբերութիւնը հիմնականում կառուցվածքային բնույթի է: Առաջին խմբի ձեռագրերը առաջաբանից բացի պարունակում են 30 գլուխ, մինչդեռ երկրորդ

ձեռագրախումբը, առաջաբանով հանդերձ, ունի 31 գլուխ: Այս լրացուցիչ գլուխը լատիներեն տարբերակում եւ նրան հարող որոշ հունարեն ձեռագրերում գոյացել է ընդարձակ XII գլխի երկու մասի բաժանումից: Սրանից բացի երկրորդ ձեռագրախումբում հանդիպում են եւ այլ կառուցվածքային փոփոխություններ, օրինակ՝ IX գլխի վերջին մասը լատիներեն ձեռագրերում տարվել է X գլխի սկիզբը, իսկ XXVIII գլխի վերջին նախադասությունը՝ XXIX գլխի սկիզբը:

Մեր կողմից կատարած հայերեն քննական բնագրի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այն պատկանում է Ֆորբսի դասակարգման երկրորդ ձեռագրախմբին (28): Վերոհիշյալ կառուցվածքային տարբերություններից, որոնք բնորոշ են այդ խմբին, այստեղ առկա է XII գլխի բաժանումը երկու առանձին գլխի (հայերեն թարգմանության XIII - XIV գլուխներ), ինչպես նաեւ XXVIII-XXIX գլուխներում (հայերենի XXX-XXXI գլուխներ) կատարած բնագրային տեղափոխությունները: Դրանից բացի հայերեն թարգմանությունը պարունակում է 31-ի փոխարեն 32 գլուխ, քանի որ առաջաբանը մեզանում դիտվել է որպես առանձին գլուխ: Հայերեն թարգմանության մեջ բացակայում է հունարեն բնագրի ձոնը Գրիգոր Նյուսացու կրտսեր եղբայր Պետրոսին, սակայն դրա փոխարեն հեղինակի անվան կողքին նշված է նրա ավագ եղբայր Բարսեղ Կեսարացու անունը, որը առկա է նաեւ Ֆորբսի կողմից հրատարակված լատիներեն տարբերակի վերնագրում: Հասկանալի է, որ հայերեն թարգմանության մեջ պիտի բացակայեր Նյուսացու գրքին նվիրված ոմն Նիկիտայի բանաստեղծություն-էպիգրաման՝ ΕΙΣ ΤΟΝ ΑΓΙΟΝ ΓΡΗΓΟΡΙΟΝ ΝΙΚΗΤΑ (24, 124D-126C), որը հանդիպում է միայն ուշ շրջանի բյուզանդական ձեռագրերում (29, c. 180):

«Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» հայերեն թարգմանության քննական բնագիրը արբահայր Ժ. Պ. Մինի հրատարակված հունարեն սկզբնաղբյուրի (24, 124 D-256 C) հետ համեմատելիս հայտնաբերել ենք հետեւյալ ուշադրության արժանի տեքստաբանական երեւույթներ՝ 1. հայերեն թարգմանության մեջ հանդիպում են բառեր, որոնք բացակայում են հունարեն սկզբնաղբյուրում 2. հունարեն բնագրի բազմաթիվ բառեր հայերեն թարգմանության մեջ հանդես են գալիս աղավաղված ձևով 3. հայերեն թարգմանության մեջ առկա են բնագրային բացթողումներ:

Ինչ վերաբերում է առաջին խմբի բառերին, ապա դրանք որոշ դեպքերում մատնանշում են բավականին կարեւոր երեւույթ, այն է՝ մեկ այլ հունարեն գրչագրի առկայությունը, որը ընկած է հայերեն թարգմանության հիմքում: Այսպես, օրինակ՝ հունարեն բնագրում (24, 153C), որտեղ խոսքը մտքի անտեսանելի բնույթի մասին է, սխալմամբ հանդես է գալիս τοῦ ἀνθρώπου (մարդոյն) բառաձեւը τοῦ νοῦ (մտացն*)-ի փոխարեն, մինչդեռ հայերեն թարգմանության մեջ (ՄՄ ձեռ. 468, էջ 26բ), ինչպես նաեւ անգլերեն տարբերակում (19, Chap. XI), որոնք ամենայն հավանականությամբ արված են մեկ այլ հունարեն ձեռագրից, առկա է «մտացն - mind» ձիշտ ձեւը:

Կամ էլ հունարեն բնագրի (24, 176A) τὴν δὲ τρεφομένην μὲν καὶ αὐξανομένην (որ կերակրի եւ աճէ) հատվածը հայերեն թարգմանվել է՝ «որ կերակրի եւ զգայ» (ՄՄ ձեռ. 468, էջ 46ա): Նույնը առկա է անգլերեն թարգմանության մեջ՝ «which at once receives nourishment and is capable of perception» (19, Chap. XIV, 2): Ռուսերեն թարգմանության մեջ, որը հետևում է արբահայր Ժ. Պ. Մինի հրատարակված հունարեն տարբերակին, սրա փոխարեն ունենք՝ «питательную и растительную» (29, c. 61): Սակայն սույն դեպքում հոգու երեք գորություններից, որոնք հատուկ են բույսերին, կենդանիներին եւ բանական էակին՝ մարդուն, խոսքը երկրորդի մասին է: Ուստի հունարեն բնագրում եւս պետք է լիներ, ինչպես հայերեն ու անգլերեն թարգմանության մեջ, ոչ թե՛ τὴν δὲ τρεφομένην μὲν καὶ αὐξανομένην (որ կերակրի եւ աճէ),

այլ Τὴν δὲ τρεφομένην μὲν καὶ αἰσθανομένην* (որ կերակրի եւ զգայ): Այսպիսով կարելի է ենթադրել, որ հայերէն եւ անգլերէն թարգմանությունները հետեւել են հունարէն մեկ այլ գրչագրի, որը պատկանում էր Ֆորբսի դասակարգման երկրորդ ձեռագրախմբին (27): Վերջինս, ինչպէս ասվեց, հունարէնից բացի պարունակում է նաեւ լատիներէն տարբերակի ձեռագրեր: Իրոք, լատիներէն թարգմանության մեջ ասված է. «*alia et nutriatur, et sentiat*» (24, 175A):

Եվս մի օրինակ. հունարէն բնագրում (24, 253C) ասված է. καὶ ἐστὶ λέων (եւ է առիւծ), մինչդեռ հայերէն թարգմանության մեջ «առիւծ»-ից հետո ավելացրած է «կամ մարդ» (ՄՄ ձեռ. 468, էջ 113բ): Նույնը հանդիպում է անգլերէն թարգմանության մեջ՝ «*is a lion, or a man*» (19, Chap. XXX, 30): Ուստի հայերէն եւ անգլերէն թարգմանությունները պիտի հետեւեին այնպիսի հունարէն գրչագրի, որտեղ առկա էր «*ἄνθρωπος*» հավելումը: Իսկապէս լատիներէն տարբերակում ասված է. «*ipse vel leo, vel homo*» (24, 253C): Այս ամենը վկայում է, որ հայերէն թարգմանությունն երկրորդ ձեռագրախմբին հատուկ կառուցվածքային առանձնահատկություններից բացի ցուցաբերում է նաեւ բնագրային բնույթի կարեւոր տարբերություններ:

Երկրորդ խմբի բնագրային շեղումների վերլուծության արդյունքում պարզվել է, որ դրանք իրենց հերթին բաժանվում են երկու ենթախմբերի: Առաջինը հիմնականում բաղկացած է այնպիսի բառերից, որոնք աղճատվել են դեռեւս հունարէն ձեռագրերում: Եվ իրոք, դժվար է պատկերացնել, որ Ստեփանոս Սյունեցին եւ Դավիթ Հյուսիսատուր, որոնց թարգմանությունը ընդհանուր առմամբ բառացի բնույթ է կրում, ինչպէս հունաբան դպրոցի այլ գործեր, այդքան հեռանային հունարէն սկզբնօրինակից, կամ էլ նրանց հունարէնի իմացությունը անբավարար լիներ:

Այդ խմբի աղճատված բառերին համապատասխանող հունարէն տարբերակներն իրենց ձեւով հնչակից են հունարէն ճիշտ տարբերակներին, ուստի աղավաղումը տեղի է ունեցել հենց հունարէն ձեռագրում: Բերենք օրինակներ: Հունարէն բնագրում (24, 132A.) ունենք՝ τῶν ὠραίων (բերիւք*) բառաձեւը, որը սակայն հայերէն թարգմանվել է որպէս «լերամբք» (τῶν ὀρών) (ՄՄ ձեռ. 468, էջ 6 բ): Այս երկու բառաձեւերը՝ «բերիւք» եւ «լերամբք» հայերէնում երբեք չէին կարող շփոթվել, նույնիսկ եթէ աղավաղվեին, մինչդեռ հունարէնի ὠραίων եւ ὀρών-ը այնքան մոտ են ձեւական առումով, որ մի փոքր աղավաղման դեպքում հեշտութեամբ կարող էին նույնացվել: Հենց այդ էլ տեղի է ունեցել հունարէն ձեռագրում:

Մեկ այլ օրինակ. հունարէն բնագրի (24, 137C) τὴν ζῆτητικὴν (զքննական*) բառաձեւը, աղավաղված լինելով հունարէն ձեռագրում, շփոթվել է τὴν ζωτικὴν (զկենդանական) ի հետ եւ հայերէնում դարձել «զկենդանականն» (ՄՄ ձեռ. 468, էջ 12բ): Կամ էլ հունարէն բնագրի (24, 149A) τὸ στόμα (բերան*) գոյականը, հայերէն տարբերակում (ՄՄ ձեռ. 468, էջ 22ա) հանդես է գալիս որպէս «մարմինս» (τὸ σῶμα): Հայերէնում այս երկու բառաձեւերը չէին կարող շփոթվել, մինչդեռ հունարէնում τὸ στόμα-ն աղավաղվելով հեշտութեամբ կարող էր շփոթվել τὸ σῶμα-ի հետ: Մեկ այլ դեպքում հունարէն բնագրի (24, 149D) τὸν ἦθμὸν (ի մաղն*) բառաձեւը հայերէն թարգմանության մեջ (ՄՄ, ձեռ. 468, էջ 23 բ) հանդես է գալիս որպէս τὸν ἰσθμὸν (ի պարանոցն): Հայերէնում «մաղն» եւ «պարանոցն» հնարավոր չէ շփոթել, մինչդեռ հունարէնում τὸν ἦθμὸν-ը հեշտութեամբ կարող էր աղավաղվել ու նույնացվել τὸν ἰσθμὸν-ի հետ: «Նոր հայկազյան բառարանում» վերջինս, ինչպէս եւ «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքի մի շարք այլ աղավաղված բառաձեւեր, ուղղված չեն: Նմանապէս հունարէն ձեռագրում աղավաղվել են մի շարք այլ բառաձեւեր, օրինակ՝ αἰτιολογία (պատճառագիտութիւն*) գոյականի աղճատված ձեւը շփոթվել է ἀντιλογία-ի հետ (24, 165A) ու թարգմանվել հայերէն որպէս «հակառակաբանութիւն» (ՄՄ ձեռ. 468, էջ

36ա): Կամ էլ հունարեն ձեռագրերից մեկում (24, 177B) *κάδων* (տակառաց*) գոյական անունը, աղավաղվելով եւ շփոթվելով *καιρών*-ի հետ, հայերեն թարգմանվել է որպես «ժամանակեայց» (ՄՄ ձեռ. 468, էջ 48ա): Պակաս հավանական է լատինացված ու աղավաղված *cadus* գոյականի նույնացումը լատիներեն *caducum* (ժամանակեայ) ածականի հետ:

Այլ դեպքում սկզբնաղբյուրի (24, 196A) *ἀτέλειαν* (զագատութիւն*) գոյականը, աղավաղվելով ու շփոթվելով *τέλειος* (կատարեալ) ածականի հետ, հայերեն թարգմանվել է որպես «կատարեալ» (ՄՄ ձեռ. 468, էջ 62ա): Հունարեն ձեռագրերում բառաձևերի աղավաղման պարզ օրինակներ են նաեւ *τῆς λογικῆς* (տրամաբանութեան*)-ի (24, 224C) հանդես գալը որպես «անասնական» (*ἄλογος*) հայերեն թարգմանության մեջ (ՄՄ ձեռ. 468, էջ 86բ), ինչպես եւ սկզբնաղբյուրի (24, 228D) *τροφή* (կերակուրն*) բառաձևի աղճատումը եւ շփոթումը հունարեն ձեռագրում *στροφή* (շրջումն)-ի հետ ու հայերենում (ՄՄ ձեռ. 468, էջ 90ա) որպես «շրջումն» թարգմանվելը: Այլ դեպքում հունարեն բնագրի (24, 244C) *νεύματι* (թարթափ ական*)-ի աղավաղված ձևը հայերեն թարգմանության մեջ (ՄՄ ձեռ. 468, էջ 103բ) հանդես է գալիս որպես «հմանալույն» (*νοήματι*):

Այս երեւոյթը ժամանակին նկատել էր նաեւ Ռ. Թոմսոնը: Համեմատելով Դիոնիսիոս Արեոպագոցուն վերագրվող գործերի հայերեն թարգմանությունը հունարեն բնագրի հետ՝ «*Armenian Version of the Works attributed to Dionysius the Areopagite*» գրքի առաջաբանում նա հետեւյալն է գրում. «Իր թարգմանության մեջ Ստեփանոս Սյունեցին փորձել է հնարավորինս մոտ մնալ հունարեն բնագրին, եւ այսպիսով հայերեն տարբերակի սխալներից շատերը ուղղակի հետեւանք են հունարեն բնագրում առկա ուղղագրական սխալների բառացի վերարտադրման» (25, *Introduction*, p. IX):

Բնագրագիտական վերլուծության ընթացքում պարզվել է նաեւ, որ մի շարք աղավաղումներ առաջացել են հայերեն բնագրում: Սրանց թիվն անհամեմատ ավելի փոքր է, քան առաջին խմբի բառերի: Կանգ առնենք այդ աղճատումների վրա: Այսպես, օրինակ՝ հունարեն բնագրի (24, 152C) *δοχεία* (ամանք*) գոյականը, աղավաղվելով մի շարք հայերեն գրչագրերում, հանդես է գալիս որպես «ամենեքին», «ամենեքեան» եւ «ամենեքեանք» դերանվանական ձևեր (ՄՄ ձեռ. 468, էջ 24բ): Հունարեն բնագրի (24, 160A) *παρεγγέοντος* (հոսելոյ*) բառաձևը հայերեն ձեռագրերի մեծ մասում դարձել է «հասելոյ» (ՄՄ ձեռ. 468, էջ 31ա): Հունարեն բնագրում (24, 172A,B, 173C.) երեք անգամ հանդիպում է *καθ' ὑπαρ* (ի լրջէ*, արթուն) արտահայտությունը, որը սակայն աղավաղվելով հայերեն գրչագրերում (ՄՄ ձեռ. 468, էջ 42ա-բ, 45ա) դարձել է «ի վերջէ» (*καθ' οὐράν*): Հունարեն բնագրի (24, 193B) *τὴν ἀνδρίαν* (զարիութիւն*) գոյականը հայերեն գրչագրերի մեծ մասում աղավաղվելով դարձել է «զարութիւն» (ՄՄ ձեռ. 468, էջ 61ա):

Ուսումնասիրության ընթացքում հայերեն թարգմանության մեջ հայտնաբերել ենք նաեւ բնագրային բացթողումներ,։ Այդ բացթողումները լինում են մեկ բառի, բառակապակցության, կամ էլ ամբողջ նախադասության տեսքով: Հայերեն թարգմանության մեջ (ՄՄ ձեռ. 468, էջ 13բ) բացակայում են «զմարդն*» (*ἄνθρωπον*) եւ «կերպարանի*» (*εἰκόνα*) բառաձևերը, որոնք առկա են հունարեն բնագրում (24, 140B): Մեկ այլ տեղ հայերեն թարգմանության մեջ (ՄՄ ձեռ. 468, էջ 33ա) բաց է թողած հունարեն բնագրի «պատահէ*» (*συμβαίνει*) բայը (24, 161A):

Հունարեն բնագրի (24, 129C) *ἐν τῷ βάρει μὴ πεδηθείσης* (ոչ կապեալ ի շղթայս ծանրութեան*) հատվածը բացակայում է հայերեն բնագրում (ՄՄ ձեռ. 468, էջ 5ա): Նույնը կարելի է ասել հունարեն բնագրի (24, 221A) *ἀποδιδόναί πάλιν τῷ ζῆν* (վերստին ի կեանս դարձուցեալ լինի*) հատվածի, որը չկա

հայերէնում (ՄՄ ձեռ. 468, էջ 83ա), կամ նրանից մի քանի տող ներքեւ գտնվող (24, 221A) ἐκ νόσου χαλεπήσ (դժուար ախտից*) բառակապակցութեան մասին (ՄՄ ձեռ. 468, էջ 84բ): Հունարեն բնագրում առկա Պողոս առաքյալի հայտնի խոսքերը ἀπεκδύσασθαι δεῖν τὸν παλαιὸν ἄνθρωπον, καὶ ἐνδύσασθαι τὸν νέον («պարտ է ի բաց մերկանալ զհին մարդն եւ զգեճուլ զնորն») (24, 256C) շնորհիվ բացթողումների թարգմանվել է ոչ ճշգրիտ ձևով: Հայերեն թարգմանութեան մեջ բացակայում են «պարտ է*» (δεῖν) եւ «զնորն*» (τὸν νέον) բառաձեւերը (ՄՄ ձեռ. 468, էջ 115ա):

Որոշ դեպքերում դժվար է ասել այս ամենը տեղի է ունեցել թարգմանութեան ժամանակ կամ էլ հայերէն ձեռագրերի ընդօրինակման ընթացքում, թե հունարեն ձեռագրերում առկա բացթողումների պատճառով: Յավոք սրտի, առ այսօր հրատարակված չէ «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գործի լիակատար հունարեն քննական բնագիրը, որը պետք է կազմեր Նյուսացու երկերի բազմահատորյակի (20) IV հատորը Հեղվիգա Հյորնեթի խմբագրութեամբ: Հուսով ենք, որ հետագայում նրա լույս ընծայելուն պես կարելի կլինի վերջնականապէս հաստատել մեր տեքստաբանական վերլուծութեան արդյունքները: Սակայն առանց այդ էլ բերած փաստերը վկայում են, որ Ստեփանոս Սյունեցին ու Դավիթ Հյուսպատոսն օգտվել են ոչ թե աբբահայր Մինի կողմից հրատարակված ուշ շրջանի հունարեն տարբերակից (24, 124 D-256 C), այլ վաղ միջնադարի (V-VIII դդ.) սխալաշատ մի հունարեն գրչագրից, որը մտնում էր Ֆորբսի դասակարգման երկրորդ ձեռագրախմբի մեջ եւ, ավաղ, հեռու էր «ի ստոյգ օրինակաց» լինելուց (միջնադարյան գրչի խոսքերով): Ի դեպ՝ Ռ. Թոմսոնը եւս, անդրադառնալով Դիոնիսիոս Արեոպագոսուն վերագրվող գործերի հայերէն թարգմանութեանը, նշում է, որ վերջինս իր սխալներով չափազանց մոտ է IX դարի սկզբին ընդօրինակված MS Parisinus 437 հունարեն ձեռագրին (26, Introduction, pp. VII-VIII):

«Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» աշխատութեանը որոշակի ազդեցութիւն է թողել ոչ միայն աստվածաբանութեան ու փիլիսոփայութեան, այլեւ բնական գիտութիւնների ու բժշկութեան զարգացման վրա միջնադարյան Հայաստանում: Նրա ազդեցութեանը պարզ զգացվում է կիլիկյան բժշկական դպրոցի ներկայացուցիչներ Աբուսայիդի (XII դ.) «Յաղագս կազմութեան մարդոյ» ու Իշոխի (XIII դ.) «Գիրք ի վերայ բնութեան» երկերում, ինչպէս նաեւ Գրիգոր Տաթևացու (1346-1409) «Գիրք հարցմանց»-ում: Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» երկասիրութեան հետ միասին այն ուսումնասիրվել ու մեկնաբանվել է Կիլիկիայի, Տաթևի, Երզնկայի կաճառներում եւ այլուր հայ փիլիսոփաների, բնագետների ու բժիշկների, այդ թվում ԺԳ դարի նշանավոր գիտնական Վահրամ Բաբունու կողմից: Այդ հարուստ մեկնողական գրականութեանը՝ «Նուծմունք Կազմութեան գրոց» եւ «Մեկնութիւն Կազմութեան գրոց» վերնագրով պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանի ԺԳ-ԺԸ դարերի մի շարք գրչագրերում (ձեռ. 55, 59, 621, 626, 1919, 2498 եւ ուրիշներ): Դեռ ավելին. «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկը պարունակող Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերի լուսանցքներում եւ նույնիսկ բուն տեքստում առկա են բազմաթիվ լուծմունքներ:

Եվ վերջում մի քանի խոսք «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գործի հայերէն թարգմանութեան լեզվի եւ ոճի մասին: Այն թարգմանելիս Ստեփանոս Սյունեցին ու Դավիթ Հյուսպատոսը, անկասկած, զգացել են նրա «քաղցրաբան» լեզվի գեղեցկութեանը, ուստի տեղ-տեղ հրաժարվելով հունարեն դպրոցի բառացի թարգմանութեան սկզբունքից, կարողացել են գրաբարի ընձեռած հարուստ հնարավորութիւններով վարպետորեն վերարտադրել Նյուսացուն հատուկ պատկերավոր մտածողութեանը եւ նուրբ գեղարվեստական ճաշակն ու ոճը: Այսպէս, օրինակ՝ անդրադառնալով արարչագործութեանից հետո երկրի հրաշալիքներին, Նյուսացին բանաստեղծի եւ արվեստագետի ոգեշնչմամբ ստեղծում է հետեւյալ սքանչելի պատկերը (24, 132A,

Բ), որը հայերեն թարգմանության մեջ չի կորցրել իր հմայքը. «Եւ լի էր լեռամբք [բերիւք] երկիր՝ ի միասին միանգամայն ծաղկաւք զպտուղս բուսացեալ: Եւ լի մարգք եւ բուրաստանք, որ ինչ միանգամ ի նոսա բնութիւն է լինել: Եւ ամենայն ողունք, ձորք եւ ձորձորք, եւ սարք, եւ ամենայն, որ ինչ միանգամ կողմանաւոր է եւ զառիկող, եւ որ ինչ միանգամ ի հովիտս նորափթիթ դալարի: Եւ բազմապատիկ ծառոցն ժամանակ պսակեալ էր արդի եւս յերկրէ ի վեր բուսեալ եւ անդէն առ կատարեալ գեղեցկութիւնն հասեալ: Եւ խնդայր եւ զուարճացեալ էր ամենայն ինչ ըստ վայելչութեան եւ խայտայր, հրամանով Աստուծոյ կենդանածնեալ, արաւտականք յանդեպս եւ յազգս իւրաքանչիւր՝ ի թփուտ մացառս այսր-անդր ընթանալով: Երաժշտական թռչնոցն երգովք ամենայն վայրք հնչէին, ամենայն, որ ինչ միանգամ թաւ եւ տերեւախիտ էր եւ հովանուտ» (ՄՄ ձեռ. 468, էջ 6բ-7ա): «Տեսութիւն ի մարդոցն կազմութիւն» գրքի էջերում, ինչպես եւ նյութացու այլ գործերում, կարծես վերակենդանանում է իր հայրենի Կապադովկիայի բնության անզուգական գեղեցկությունը:

Ամփոփելով կարելի է ասել, որ հայերեն թարգմանությունը տեղ-տեղ մոտենալով ծագումով սկյութացի Դիոնիսիոս Փոքրի (VI դ) լատիներեն տարբերակի ազատ քերթողական ոճին, ընդհանուր առմամբ ավելի հարազատ է մնում իուլանդացի էրիուգենայի (IX դ) բառացի թարգմանությանը, որը հատուկ էր միջնադարին:

ՍԿՋԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա-Ե, Երեւան, 1942-1962, հ. Դ, 1948:
2. Ս. Ս. Արեւշատյան, Հնագույն հայկական թարգմանությունները եւ նրանց պատմաճակովային նշանակությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, N 1:
3. Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցաւրեայ արարչութեան, աշխ. Կիմ Մուրադյանի, Երեւան, 1984:
4. Գարեգին Ա. կաթողիկոս Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951:
5. Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա-Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անրաբյան, Երեւան, 1965, 1970:
6. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անրաբյան, Երեւան, 1984:
- 7., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունեան, Փ. Անրաբեան, Ա. Քեօշկերեան, Երեւան, 2004:
8. Գ. Զարպիանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889:
9. Ս. Ճեմնեմեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Դ-Ը, Վենետիկ, Ս. Ղազար, 1993-1998:
10. Կ. Մուրադյան, Գրիգոր Նյութացին հայ մատենագրության մեջ, Երեւան, 1993:
11. Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, աշխ. Գ. Ավետիսեանի, Խ. Սյուրմելեանի, Մ. Ավգերեանի. հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-37:
12. Մ. Զամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785:
13. Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստ. Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910:
14. Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Յակոբեանց, հ. Ա-ԺԱ, Երուսաղէմ, 1966-1991:
15. Ստելլա Վարդանյան, Հայաստանի բժշկության պատմություն, Երեւան, 2000:
16. Յ. Տաշեան, Մատենագրական մանր ուսումնասիրությունք, Ա-Զ, Վիեննա, 1895:

- 17 Ա.Վ. Տեր-Պողոսյան, *Քրիստոսական մտքի զարգացումը Հայաստանում, Երեւան, 1960, էջ 199-207:*
18. .M. Altenburger, F. Mann, *Bibliographie zu Gregor von Nyssa, Editionen, Übersetzungen- Literatur, Leiden etc, E, J. Brill, 1988.*
19. Gregory of Nyssa. *On the Making of Man, translated by W. Moore and H. Wilson, in The Select Library of Nicene and Post-Nicene Fathers, Ser. II, 5, New York, 1893.*
20. Gregorii Nysseni Opera. *Leiden, 1959- 1987. Vol. I, II, III (pars 1, 2), V, VI, VII (pars 1, 2), VIII (pars 1, 2), IX (pars 1) Supplement.*
21. *Histoire de la Siounie par Stéphanos Orbélian, traduite de l'Arménien par M. Brosset, Saint Pétersbourg, 1864.*
22. P. Levine, *Two Early Latin Versions of St. Gregory of Nysse's* *περὶ κατασκευῆς ἀνθρώπου, Harvard Studies in Classical Philology, 63, (1958), p. 473-492.*
23. C. F. Neumann, *Versuch einer Geschichte der armeniaschen Literatur. Leipzig, 1836.*
24. *Patrologiae Cursus Completus. Accurante J. P. Migne. Series graeca.. Parisiis.*
25. R. W. Thomson, *Armenian Version of the Works attributed to Dionysius the Areopagite, CSCO,488 (Armenian text), Scriptorum Armeniaci 17, Louvain, 1987.*
26. R. W. Thomson, *Armenian Version of the Works attributed to Dionysius the Areopagite, CSCO, 489 (English translation), Scriptorum Armeniaci 18.*
27. *Τοῦ ἐν ἁγίοις πατρὸς ἡμῶν Γρηγορίου ἐπισκόπου Νύσσης(ἀδελφοῦ τοῦ μεγάλου Βασιλείου) τὰ εὑρισκόμενα πάντα. Sancti patris nostri Gregorii Nysseni Basilii Magni fratris quae supersunt omnia. In unum corpus collegit, ad fidem codd. mss. recensuit, Latinis versionibus quam accuratissimis instruxit et genuina a supposititiis discrevit Georgius H. Forbesius. Tomus primus. Burntisland, e typographeo de Pitsligo. Fasc. I, 1855. Fasc. II, 1861*
28. Stella Vardanyan, *The ancient Armenian Version of "On the Making of Man" by Gregory of Nyssa. Proceedings of the 21 st International Congress of Byzantine Studies, London 21-26 August 2006, v. III, p.197.*
29. Григорий Нисский. *Об устройении человека, пер., послесл. и примеч. В. М. Лурье, СПб, 2000.*
30. Хр. Кучук-Иоаннесов, Григорий Нисский (331-394 гг.), *Известия Таврической ученой архивной комиссии, Симферополь, 1916, 53.*
31. Л. А. Оганесян, *История медицины в Армении в 5 томах, т. 1, Ереван, 1946.*